ԴԵՊԻ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 50-ԱՄՅԱԿԸ

Ռ. Ա. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Լենինյան դվարդիայի ականավոր գործիչ Գ. Կ. Օրջոնիկիձեն չթուլացող հետաքրքրությամբ հետևում էր Զանգեզուրում և նրան հարակից գավառներում ծավալվող իրադարձություններին։ Նա բոլշևիկ հեղափոխականին հատուկ կըրքոտությամբ ու հետևողականությամբ պայքարում էր որքան կարելի է շուտ չարքաշ ու աղատատենչ զանգեզուրցուն փրկել դաշնակցական և մուսավաթական ավանտյուրաներից։

«Հենց այստեղ, Անդրկովկասում, այդ երեք գավառներում էր թաքնված այսպես կոչված հայ և մուսուլմանական (աղրբեջանական) հարցի հանգույցը։ Մի հարց, որ դարձավ սարսափների աղբյուր, փոխադարձ ոչնչացման նպատակով աշխատավոր մուսուլմանին ու աշխատավոր հային իրար դեմ մղելու աղբյուր»— գրում էր Օրջոնիկիձեն այն տարիներին[1]։

1918 թ. ամռանը Անդրկովկասը օկուպացվեց գերմանա-թուրքական դավթիչների կողմից։ Ասպատակելով ողջ Հայաստանը, թուրքական ջարդարարները կանգ առան Զանգեզուրի դարպասների առջև և ոչ մի կերպ չկարողացան ներս խուժել։

Անդրանիկ զորավարն իր ջոկատի և տեղական աշխարհազորային խմբերի հետ միասին լուրջ հակահարված տվեց օսմանական դավթիչներին և գավառի բնակչությանը փրկեց անխուսափելի կործանումից։

1918 թ. աշնանը Գ. Կ. Օրջոնիկիձեն, որպես Սովետական Ռուսաստանի արտակարգ կոմիսար, գտնվում էր Հյուսիսային Կովկասում ու գլխավորում տեղական աշխատավորության պայքարը նոր կարգերի հաղթանակի համար։ Չնայած ծանր ու լարված աշխատանքային պայմաններին, նա հեռվից ուշի-ուշով հետևում էր Անդրկովկասում ծավալվող իրադարձությունների ընթացքին, այդ մասին սիստեմատիկաբար հաղորդում Սովետական Ռուսաստանի կառավարությանը և անձամբ Լենինին։

1918 թ. հոկտեմբերի 12-ին Վ. Ի. Լենինին հղած հեռագրերից մեկում Գ. Կ. Օրջոնիկիձեն հետևյալն է գրում. «Հայաստանում տիրող իրադրությունը ողբերգական է։ Ղարաբաղ մտած թուրքական զորքերը մորթել են ժողովրդի կեսին։ Զանգեզուրի և Շուշվա գավառների բնակչությունը կատաղի դիմադրու-

---

[1] Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. I, стр. 140, М., 1956.

թյուն է ցույց տալիս... Հայ ժողովուրդը Սովետական Ռուսաստանից սպասում է օգնություն»[2]։

(Հետաքրքրական է նշել, որ այս նույն հեռագրի մեջ Գ. Կ. Օրջոնիկիձեն սխալ ինֆորմացիա ստանալով, Վ. Ի. Լենինին հաղորդում է, որ Ղարաբաղում դավաճանաբար սպանվել է Անդրանիկը)։

Պարտություն կրելով դաշնակից ուժերի կողմից, նույն թվականի ուշ աշնանը, թուրքերը հեռացան Անդրկովկասից։ Նրանց անմիջապես փոխարինեցին անգլիական գաղութարարները և նոր ուժով բորբոքեցին ազգամիջյան կռիվները տեղական ժողովուրդների միջև։

Սովետական պետության և կոմունիստական կուսակցության ականավոր գործիչներ Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ս. Մ. Կիրովը, Ա. Ի. Միկոյանը խիստ անհանդրստանալով Անդրկովկասում և մասնավորապես Զանգեզուրում ու Լեռնային Ղարաբաղում ծավալվող արյունալի իրադարձություններից, դիմում են ՌԿ(բ)Կ Կենտկոմին, Վ. Ի. Լենինին, նրանցից ստանում անհրաժեշտ ցուցումներ և, տեղական աշխատավորական զանգվածների ուշադրությունն ազգամիջյան կռիվներից շեղելով, ուղղում երկրամասում նոր կարգերի հաղթանակի ապահովմանը։

1919 թ. հունվարին իր մի ընդարձակ հեռագրի մեջ Գ. Կ. Օրջոնիկիձեն Վ. Ի. Լենինին իրազեկ պահելով Անդրկովկասի ռազմա-քաղաքական կացությանը, նշում է, որ թուրքերը հեռանալով Շուշիից և հայկական մյուս գավառներից իրենց հետ տարել են միլիոնավոր ռուբլիների գույք, և որ անգլիական օֆիցերները մտել են Շուշի, այնտեղից էլ Զանգեզուր[3]։

Հասկանալի էր, որ բոլշևիկները չէին կարող այդ աննորմալ երևույթների նկատմամբ անտարբեր լինել կամ միայն պասսիվ, հայեցողական դիրք գրավել։ ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն Գ. Կ. Օրջոնիկիձեի ղեկավարությամբ բոլոր տեղական կոմունիստական կազմակերպությունների գործունեությունը կենտրոնացնում է երկրամասում ազգամիջյան հակամարտություններին վերջ տալու, աշխատավորության ուժերը դասակարգային անհաշտ պայքարի մեջ ներգրավելու համար։

Տեղական բնակչության մեջ քաղաքական-կազմակերպական աշխատանքն ուժեղացնելու հետևանքով գյուղացիական ըմբոստություններ են ծագում նաև Զանգեզուրում և Լեռնային Ղարաբաղում։ Բոլշևիկների ղեկավարությամբ գյուղացիները խլում են բեկական հողերն ու բաժանում իրենց միջև, միևնույն ժամանակ, հեղափոխական պայքարը մինչև վերջ հասցնելու նպատակով, զինվում և համախմբվում են կոմունիստների դրոշի ներքո։

«Մեր իշխանությունը ունի բավական անտեսական ու ռազմական հենակետ,—1919 թ. մայիսին Վ. Ի. Լենինին գրում է ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային և Բաքվի բյուրոյի անդամ Ա. Ի. Միկոյանը,— Ղարաբաղում և Զանգեզուրում մենք հենվում ենք զինված հայ գյուղացիների վրա, որոնք չեն ընդունում մուսավաթական Ադրբեջանի կառավարությանը։ Մուսուլման գյուղացիները հակակրում են կոմունիստներին և մի շարք տեղերում նույնիսկ պաշտպանում են մեզ»[4]։

---

2 Նույն տեղում, էջ 44—45։

3 Նույն տեղում, էջ 64—65։

4 Центральный партийный архив Института марксизма-ленинизма (ЦПА ИМЛ), ф. 17, оп. 6, д. 95, л. 1—4.

1919—1920 թթ. ընթացքում Զանգեզուրում քաղաքական կյանքը մեծ աշխուժություն ապրեց։ Բաքվի կոմունայի ժամանակավոր անկումից հետո Բաքվից Զանգեզուր վերադարձան մեծ թվով կոմունիստներ, հեղափոխական տրամադրություններով համակված բանվորներ ու զինվորներ և գավառի շատ գյուղերում ստեղծեցին կոմունիստական բջիջներ։

1919 թ. աշնանը 11-րդ կարմիր բանակի զորամասերը, կրնկակոխ հետապընդելով Դենիկինի ջախջախված բանակի մնացորդներին, մտան Անդրկովկաս և օգնության եկան մուսավաթական կառավարության դեմ ապստամբած Բաքվի բանվորներին։ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվեցին սովետական կարգեր։

Հարևան ժողովրդի երկրի վրա ծածանվող հոկտեմբերի կարմիր դրոշը ոգևորության աղբյուր հանդիսացավ հայ աշխատավորության համար։ Զանգեզուրցին նույնպես սկսեց տենդագին կերպով նախապատրաստվել գավառում դաշնակների անտանելի լուծը թոթափելու և նոր կարգերի հաղթանակը ապահովելու համար։

«Հեղափոխության հաղթանակը Բաքվում և մուսավաթի կառավարության տապալումը Ղարաբաղի ու Զանգեզուրի գյուղացիությունը ընդունել է ցնծությամբ։ Նրանք լրիվ համոզված են, որ Սովետական Ռուսաստանը միակ իշխանությունն է, որը նրանց կփրկի ամեն տեսակ ձնշումից, որտեղից էլ այն ծագի»,— գրում են Գ. Կ. Օրջոնիկիձեն, Փիրումովն ու Երզնկյանը 1920 թ. ապրիլի 30-ին[5]։

1920 թ. մայիսին Հայաստանում բռնկվեց մայիսյան ժողովրդական ապըստամբությունը։ Արձագանքելով Հայաստանի ապստամբած բանվորների ու գյուղացիների կոչին, Զանգեզուրի աշխատավորները նույնպես ապստամբության դրոշ բարձրացրին և 1920 թ. մայիսի երկրորդ կեսին գավառում հաստատեցին սովետական կարգեր։ Ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ Հ. Կամարին անմիջապես դիմեց Ղարաբաղի կոմունիստ ընկերներին և կարմիր բանակի շտաբին՝ ռազմական ուժով իրենց անհապաղ օգնության գալու համար։ Այդ նույն ժամանակ ապստամբեցին նաև Լեռնային Ղարաբաղի աշխատավորները։ Նրանց զինված ելույթներից կարճ ժամանակ անց Գ. Կ. Օրջոնիկիձեն Ղարաբաղից ստացավ հետևյալ հեռագիրը. «...Ղարաբաղում բռնկվել է ապստամբություն և հաստատվել սովետական իշխանություն։ Ապստամբության գլուխ կանգնած են կոմունիստները»[6]։

Կարմիր բանակի զորամասերը օգնության եկան ապստամբած Լեռնային Ղարաբաղին, սակայն չկարողացան շարունակել հարձակողական գործողությունները և օգնել հեղափոխական պայքարի ելած Զանգեզուրի խիզախ մարտիկներին՝ բանակի թիկունքում Գյանջայում (Կիրովաբաղ) ծագած մուսավաթական հակահեղափոխական խռովության հետևանքով։

1920 թ. մայիսի սկզբներին Գ. Կ. Օրջոնիկիձեն եկավ Լեռնային Ղարաբաղ՝ մոտիկից ծանոթանալու երկրամասում տիրող դրությանը և հետևյալ բովանդակությամբ հեռագիր ուղարկեց Վ. Ի. Լենինին. «Հայ և մուսուլմանական բնակչությունը ցնծությամբ են դիմավորում ռուսական Կարմիր զորամասերին։

5 Նույն տեղում, ֆ. 85, ց. 13, գ. 18, թ. 1—4։
6 Նույն տեղում, ֆ. 85, ց. 13, գ. 14, թ. 6։

Համոզված եմ, որ Շուշվա շրջանը, Զանգեզուրը, Նախիջևանը, Օրդուբադը և Ջուլֆան մեր զորքերի կողմից կազատագրվեն առանց դիմադրության»[7]։

Զանգեզուրի և Նախիջևանի գավառներում ազգային խաղաղություն վերականգնելու նպատակով կարմիր բանակի զորամասերը 1920 թ. հուլիսի ըսկզբներին անցան հարձակման։ 11-րդ բանակի 32-րդ հրաձգային հեծյալ բրիգադան, առանց որևէ դիմադրության, ազատագրեց Զանգեզուրը։ Տեղական բնակչության ոգևորությանը չափ չկար։

1920 թ. հուլիսի 16-ին Զանգեզուրում գտնվող սովետական զորամասերից մեկին հրաման տրվեց Գորիս-Անգեղակոթ-Կարմալինովկա (Բիչանագ) խճուղով շարժվել դեպի Նախիջևան։ Ադրբեջանական ՍՍՀ Զանգիլանի շրջանից դեպի Օրդուբադ շարժվեց նաև 18-րդ հեծյալ դիվիզիայի բրիգադներից մեկը։

Ելնելով Նախիջևանում ստեղծված ռազմա-քաղաքական բարդ իրադրությունից, որն առանձնապես սրվել էր այնտեղ գտնվող քեմալական զորքերի առկայության հետևանքով, Գ. Կ. Օրջոնիկիձեն Հայաստանում Սովետական Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանին հանձնարարում է դաշնակցական կառավարությանը կրկին տեղեկացնել, որ Սովետական Ռուսաստանը Նախիջևանը զավթելու մտադրություն չունի և հետևապես անհրաժեշտ է, որ դաշնակցականներն իրենց զորքերին ցուցում տան չընդհարվելու սովետական զորամասերի հետ և հայկական զորքերի ետ քաշման մասին անեն պաշտոնական հայտարարություն[8]։

Անվիճելի է, որ Նախիջևան մտած դաշնակցական բանակի հայ զինվորը չէր կռվի ռուսական կարմիր բանակի զինվորի դեմ։

1920 թ. օգոստոսի 10-ին Հայաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Լեգրանը, Գ. Կ. Օրջոնիկիձեի և Չիչերինի միջամտությամբ, կարողացավ զինադադարի համաձայնագիր կնքել դաշնակցական կառավարության հետ։

Օգտվելով ժամանակավոր զինադադարի ընձեռած հնարավորությունից ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, Գ. Կ. Օրջոնիկիձեի գլխավորությամբ, անհապաղ ձեռնամուխ եղավ ազատագրված գավառների բնակչության դրության բարելավմանը։ Զանգեզուրում անմիջապես ստեղծվեցին սովետական իշխանության օրգաններ։ Գավառային հեղկոմի նախագահ նշանակվեց փորձված հեղափոխական բոլշևիկ Հ. Կամարին։

Նորաստեղծ սովետական օրգանները, կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ, լուրջ պայքար ծավալեցին գավառում տնտեսական ու կուլտուրական շինարարության զարգացման, սովետական բանակի զորամասերի հետ համագործակցելու և նրանց ակտիվ աջակցություն ցույց տալու գործում։

Այն ժամանակ ազատագրված տերիտորիաներում առաջնակարգ ու հրատապ հարցը հանդիսանում էր ժողովուրդների միջև ազգային համերաշխության վերականգնումը։

«Մենք հրաշալի գիտեինք,— հետագայում գրում էր Գ. Կ. Օրջոնիկիձեն,— որ Անդրկովկասում ինչպես տնտեսական շինարարության, այնպես էլ այլ բնագավառներում անհնար է որևէ առաջընթաց քայլ կատարել, առանց ազգային խաղաղությունը վերականգնելու... Անդրկովկասում սովետական իշխանություն

---

7 Նույն տեղում, ֆ. 85, ց. 13, գ. 41, թ. 1։
8 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 10, թ. 2։

հաստատելու առաջին տարվանից սկսած մեր կուսակցությունը այդ խնդրի շուրջը լայն պրոպագանդա և ագիտացիա ծավալեց։ Եվ մեզ մոտ չի եղել մի ժողով, որ դրված չլիներ այդ հարցը»[9]։

Ազատագրված գավառներում կուսակցական և սովետական օրգանների եռանդուն աշխատանքի շնորհիվ հայ և ադրբեջանական ժողովուրդների փոխադարձ վստահությունը և խանգարված բարեկամական կապերը կարճ ժամանակամիջոցում վերականգնվեցին։ Զանգեզուր վերադարձան ադրբեջանական գյուղերի այն բնակիչները, որոնք բռնի կերպով դաշնակների կողմից արտաքսվել էին։ Դեպի Նախիջևան շարժվեցին Ղափանի, Սիսիանի, Գորիսի շրջաններում մնացած հայ գաղթականները։ Մուղանի անջուր տափաստաններում ապրող խաշնարած, քոչվոր ադրբեջանական գյուղացիներին թույլատրվեց բարձրանալ Զանգեզուրի զովասուն, կանաչ սարերը։

«Ես հիշում եմ,— գրում է Գ. Կ. Օրջոնիկիձեն,— երբ Ադրբեջանում հաստատվեցին սովետական կարգեր, գյուղացիների առաջին պահանջը եղավ թույլատրել իրենց քոչվորությամբ զբաղվելու»[10]։

Սակայն, դժբախտաբար, բոլշևիկները քիչ ժամանակ ունեցան Զանգեզուրում խաղաղ շինարարությամբ զբաղվելու։ Դաշնակցական կառավարությունը իմպերիալիստական տերությունների դրդմամբ նախապատրաստվեց այդ լեռնաստանի վրա հարձակվելու համար և սկսեց պատրվակներ փնտրել։ Սովետական Ռուսաստանի կառավարության ուղարկած բողոքների մեջ նրանք մասնավորապես նշում էին, որ իրը կարմիր բանակը խախտում է կնքած համաձայնագրի պայմանները, հալածում խաղաղ բնակչությանը, «կազմակերպում երեխաների մասսայական սպանություններ, դատարկում հայկական գյուղերը»։

Ստացված բողոքներին ընթացք տալու նպատակով Չիչերինն անմիջապես դիմում է Գ. Կ. Օրջոնիկիձեին, խնդրելով նրան անհապաղ պարզաբանումներ տալ։ Գ. Կ. Օրջոնիկիձեն հետևյալ հեռագիրն է ուղարկում Չիչերինին. «իրենց ազմկարարությամբ դաշնակցականները ցանկանում են թաքցնել կոմունիստների նկատմամբ կիրառած իրենց գազանությունները։

Համոզված եղեք, որ ամեն ինչ կկատարվի ճշտությամբ»[11]։

Երկրորդ անգամ դաշնակցական կառավարությունը փորձում է սովետական զորքերին մեղադրել սահմանը խախտելու մեջ։

Գ. Կ. Օրջոնիկիձեն հարկադրված նոր պարզաբանումներ է տալիս Չիչերինին։

«Մի անգամ ևս հաստատում եմ,— գրում է նա,— որ բանակի հրամանատարությանը տրվել է կատեգորիկ հրաման՝ խստորեն պահպանել Հայաստանի հետ օգոստոսի 10-ին կնքած համաձայնագրի պայմանները։ Եվ այդ ժամանակից ի վեր հրամանատարությունը Հայաստանի կողմից ոչ մի բողոք չի ստացել»[12]։ Սակայն այդքանից հետո էլ դաշնակցականները իրենց պրովակացիաներին վերջ չեն տալիս։

Նոր պրովոկացիաներին վերջ տալու և անիմաստ պատերազմական գործողությունների մեջ չներքաշվելու համար Գ. Կ. Օրջոնիկիձեն միջոցներ է ձեռ-

---

9 Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. I, М., 1956, стр. 267—268.

10 Նույն տեղում, էջ 264։

11 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 14, գ. 6, թ. 3։

12 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 6, թ. 6։

նարկում խաղաղություն պահպանել սովետական կարգեր հաստատված գավառներում, բայց դաշնակցականներն արդեն նախապատրաստվել էին հարձակվելու Զանգեզուրի վրա, պրովոկացիաների զոհ դարձնելով Զանգեզուրի բնակչության մի մասին։ Հոկտեմբերին նժդեհը, որ ամրացել էր Ղափանի լեռներում, և նրա հետ կապ պահպանող Դարուլաղյազի դաշնակցական ուժերը երկու ճակատով անցան հարձակման։

Զանգեզուրը կրկին ներքաշվեց արյունոտ կռիվների մեջ։

Ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով Գ. Կ. Օրջոնիկիձեն հոկտեմբերի 22-ին հեռագրեց Մոսկվա, Լենինին և Չիչերինին։ Նա հեռագրում հանգամանորեն պատմում է ապստամբության դրդապատճառների և նրանում դաշնակցական կառավարության ունեցած մասնակցության մասին, նշելով, որ ապստամբության առաջին օրերին կարմիր բանակի դեմ դուրս է բերվել 1000 սվին, 300 սուր, հրետանի և կանոնավոր հայկական ջոկատներ։ Նա ընդհանրացնում է. «Մենք Հայաստանում կանգնած ենք նոր ավանտյուրայի փաստի առջև։ Այդպիսի իրադրությունն անտանելի է։ Անհրաժեշտ է լրջորեն միջամտել Հայաստանի կառավարության առաջ, որը բացահայտորեն ձգտում է կոնֆլիկտի մեջ մտել ՌՍՖՍՀ-ի կառավարության հետ»[13]։

Պատասխան նամակի մեջ Չիչերինը Գ. Կ. Օրջոնիկիձեին գրում է, որ ինքը Զանգեզուրում ծավալված ռազմական գործողությունների շուրջը զրույց է ունեցել Վ. Ի. Լենինի հետ և որ առաջնորդը, գավառում խաղաղությունը վերականգնելու նպատակով, դաշնակցական կառավարությանը հաղորդելու համար արել է մի շարք առաջարկություններ։

Սակայն Հայաստանի կառավարությունը մտադիր չէր ունկնդրելու Սովետական Ռուսաստանի խաղաղասիրական առաջարկություններին և չունկնդրեց։ Գնալով Զանգեզուրում պատերազմական գործողություններն ավելի ծավալվեցին և սուր բնույթ ստացան։

Կովկասյան ռազմաճակատի ռազմա-հեղափոխական խորհուրդը և 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը ձեռնարկեցին մի շարք կտրուկ միջոցներ՝ դաշնակցական-խմբապետական ավանտյուրան ճնշելու և ողջ գավառում սովետական կարգերը վերականգնելու համար։ 1920 թ. հոկտեմբերի 25-ին արագ կերպով կազմակերպվեց 11-րդ կարմիր բանակի Զանգեզուրյան հարվածային խումբը, որի կազմի մեջ մտցվեցին 18-րդ, 20-րդ և 28-րդ դիվիզիաների մարտունակ հեծյալ բրիգադներ ու մի շարք այլ զորամասեր։ Հարվածային խմբի հրամանատար նշանակվեց քաղաքացիական կռիվների լեգենդար հերոս, ուկրաինական ժողովրդի զավակ Պյոտր Կուրիշկոն[14]։

Հարվածային խումբը, տեղական կոմունիստների պարտիզանական ջոկատների ակտիվ աջակցությամբ, Ղափանի ու Սիսիանի ուղղություններով հակագրոհ կազմակերպեց դաշնակցականների զորամասերի վրա, որը, սակայն, լուրջ հաջողություն չունեցավ, որովհետև սկսած նոյեմբերի սկզբներից, կարմիր զորամասերը կլիմայական անբարենպաստ պայմանների, տեղանքի անծանոթության, մատակարարման գործի անբավարար կազմակերպման և մի շարք այլ պատճառների հետևանքով ընկան չափազանց դժվար կացության մեջ։

Ռազմաճակատից Գ. Կ. Օրջոնիկիձեին հայտնում են, որ Զանգեզուրի լեռ-

---

13 Նույն տեղում, ֆ. 65, ց. 13, գ. 58, թ. 1։

14 ЦГАСА, ф. 326, оп. 1, д. 2, л. 2.

նագագաթներին իջել է ձյունը, իսկ անդնդախոր ձորերում նստել քաշաթուխպը։ Ամբողջ օրերով ձյունախառն անձրև է գալիս։ Ուժեղ ցրտերի, թերասնման, կիսամերկ ու բոկոտն լինելու պատճառով կարմիրբանակայինները մասսայաբար հիվանդանում են։ Հրամանատարությունը նշում է, որ անբարենպաստ եղանակների պատճառով բոլոր անցումներն ու պառիվներ արահետները դարձել են անանցանելի, իսկ տեղանքին լավ ծանոթ թշնամին ճարպիկ կերպով օգտագործում է ստեղծված իրավիճակը և ակտիվացնում հարձակողական գործողությունները։

Գ. Կ. Օրջոնիկիձեն շտապում է ՌԿ(բ)Կ Կենտկոմին, Համառուսաստանյան ռազմա-հեղափոխական կոմիտեին հայտնել Զանգեզուրում ստեղծված դժվար կացության մասին և անհապաղ օգնություն խնդրել։ Նա ուղղակի գրում է. «Մեր բանակում, առանձնապես տասնմեկերորդում, կոշկեղենի և համազգեստի վիճակը կատաստրոֆիկ է այդ բառի իսկական իմաստով... Խնդրում եմ էքստերն կարգով, ամեն տեսակի հերթից դուրս, Բաքու ուղարկել 20.000 կոմպլեկտ համազգեստ։ Առանց այդ միջոցառման մենք կարող ենք կորցնել ամբողջ 11-րդ բանակը»[15]։

Դժբախտաբար, ձեռնարկվող բոլոր միջոցառումները ցանկալի արդյունք չտվեցին, որովհետև մթնոլորտային անվերջ տեղումների հետևանքով անհնար դարձավ Լեռնային Ղարաբաղից կռվող զորամասերին նոր համալրումներ, ինչպես նաև ռազմամթերք ու հանդերձանք ուղարկել Զանգեզուր։ Ռազմաճակատում Զանգեզուրյան հարվածող խմբի զորամասերի դրությունը դարձավ անտանելի։ Տեղանքը լեռնոտ, անտառապատ լինելու պատճառով շարքից դուրս եկավ հեծյալ բրիգադների մեծ մասը։

Նոյեմբերի երկրորդ կեսին ռազմաճակատն ավելի նեղացավ։ Կարմիր բանակի զորամասերը ետ քաշվեցին իրենց գրաված նախկին դիրքերից և կենտրոնացան Գորիս քաղաքում։

Հաշվի առնելով սովետական զորքերի համար ստեղծված ռազմաքաղաքական ու տնտեսական ծանր կացությունը, 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը, Կովկասյան ռազմաճակատի ռազմա-հեղափոխական խորհրդի ցուցումով, 1920 թ. նոյեմբերի 19—21-ին զորքերը ժամանակավորապես դուրս բերեց Զանգեզուրից։

Կարմիր բանակի Զանգեզուրից դուրս գալուց ընդամենը 8 օր հետո, նոյեմբերի 29-ին, Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր։ Գ. Կ. Օրջոնիկիձեն, որը մեծ ակտիվություն էր հանդես բերում Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի համար, առաջինը ողջունեց դաշնակցականների լծից ազատագրված բազմաչարչար հայ ժողովրդին։

Հետաքրքրական է նշել, որ կարմիր զորամասերը Զանգեզուրի սահմանները թողնելու ժամանակ Երևանում Լեդրանին է ներկայանում Ղափանի օկրուգային համագումարի նախագահ Աշոտ Մելիք-Մուսյանը և Նժդեհի անունից առաջարկում, որ եթե Կովկասյան ռազմաճակատի ռազմա-հեղափոխական խորհուրդը դաշնակցականներին երաշխիքներ տա կարմիր բանակի կողմից Ղափանի վրա Նախիջևան-Օրդուբադի ուղղությամբ չհարձակվելու վերաբերյալ,

---

[15] ЦПА ИМЛ, ф. 326, оп. 1, д. 2, л. 2.

ապա իրենք կթույլատրեն սովետական զորքերին շարժվելու Անգեղակոթ-Կարմանիլովկա-Նախիջևան երթուղով[16]։

Լեզրանից ստանալով այդ մասին ռադիոհեռագիր, Գ. Կ. Օրջոնիկիձեն նրան անմիջապես պատասխանում է, որ Մելիք-Մուսյանի առաջարկությունն ընդունելի է և որ ինքը ռադիոհեռագրի ամբողջ բովանդակությունը հաղորդել է Մոսկվա[17]։

Սակայն, ինչպես պետք էր սպասել, դաշնակցականները հրաժարվեցին իրենց իսկ արած առաջարկությունից։ Կարմիր բանակի կողմից չենթարկվելով որևէ հարձակման, նրանք չթույլատրեցին սովետական զորքերին Զանգեզուրի վրայով կապ պահպանել Նախիջևանում գտնվող կարմիր բանակի ստորաբաժանումների հետ։

Զանգեզուրում կարմիր բանակի կրած անհաջողությունների պատճառների ուսումնասիրությունը դուրս չմնաց Գ. Կ. Օրջոնիկիձեի տեսադաշտից։ Նա գավառում գործող զորքերի հրամանատարներից և ռազմական կոմիսարներից պահանջեց իրեն մանրամասն զեկուցագիր ներկայացնել այդ մասին։ 28-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին և կոմիսար Բերեժկոն Գ. Կ. Օրջոնիկիձեին հասցեագրած իրենց զեկուցագրի մեջ մանրամասն վերլուծում են Զանգեզուրում սովետական զորքերի պարտության ռազմա-քաղաքական ու տնտեսական պատճառները։

Զանգեզուրում սովետական բանակի կրած անհաջողությունների մանրամասն ուսումնասիրությունն ու վերլուծությունը որոշակիորեն նպաստեց կարմիր բանակի հրամանատարությանը, բոլոր պետական և կուսակցական օրգաններին, հաջորդ տարում հաջողությամբ, գրեթե առանց կռվի ազատագրելու ամբողջ գավառը։

1921 թ. փետրվարին Սովետական Հայաստանում բռնկվեց հակահեղափոխական մեծ խռովություն, որի նախապատրաստմանն ու անցկացմանն ակտիվորեն մասնակցեցին նաև Զանգեզուրում բուն դրած դաշնակցական ուժերը։

1921 թ. մարտի 22-ին, Ախտայի շրջանից, Թիֆլիս, Գ. Կ. Օրջոնիկիձեին հասցեագրած Աթարբեկյանի նամակում կարդում ենք. «Խլված է Վրացյանի Նժդեհին ուղղված նամակը։ Նամակում ցուցում է տրված վերջինիս, նոր Բայազետի ուղղությամբ մեզ վրա հարձակվելու ծայրահեղ անհրաժեշտության մասին...»[18]։

Այդ հարձակումը տեղի ունեցավ։ Սակայն Նժդեհի զորքերը, որոնք գերազանցապես հրացանի ու մտրակի սպառնալիքի տակ ռազմաճակատ քշված արքաշ զանգեզուրցիներն էին, կարմիր զորամասերի և Բայազետի կոմունիստների կողմից առաջին իսկ զորեղ դիմադրությանը հանդիպելով, նահանջեցին Դարալագյազ։

1921 թ. ապրիլի սկզբին փետրվարյան հակահեղափոխական խռովությունն իսպառ լիկվիդացվեց կենտրոնում։ Դաշնակցական «Փրկության կոմիտեի» չախջախված մնացորդները, Սիմոն Վրացյանի գլխավորությամբ, ճողոպրեցին Զանգեզուր։

---

16 Նույն տեղում, ֆ. 85, ց. 13, գ. 14, թ. 1։
17 Նույն տեղում, ֆ. 85, ց. 13, գ. 14, թ. 3։
18 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, ա. 77, ռ. 2։

Զանգեզուրը դարձավ անդրկովկասյան հակահեղափոխության վերջին հենակետը։ Դաշնակների տիրապետության կարճ շրջանում գավառը վերածվեց բանդիտիզմի ու կամայականությունների թատերաբեմի։

Դրությունը լրջորեն բարդացավ նաև Նախիջևանի, Լեռնային Ղարաբաղի գավառներում և Ադրբեջանի որոշ շրջաններում։

Նախիջևանի երկրամասի արտակարգ կոմիսար Վելիբեկովը 1921 թ. հունվարին Գ. Կ. Օրջոնիկիձեին և 11-րդ կարմիր բանակի ռազմա-հեղափոխական խորհրդին գրած իր ընդարձակ զեկուցագրի մեջ նշում է, որ Զանգեզուրից սովետական զորքերի դուրս գալուց հետո Նախիջևանում գտնվող քեմալական զորամասերը շափազանց լկտիացել են և բացարձակ թշնամական դիրք են գրավել Սովետական Հայաստանի, Նախիջևանում գտնվող հայ կոմունիստների և հայ աշխատավորության նկատմամբ։ Թուրքական կառավարությունը դեն է շպրտել իր «հեղափոխական» դիմակը և ուղղակիորեն հարում է Անտանտին, պարսկական խաներին հրահրում Սովետական Հայաստանի դեմ և մտադիր է Նախիջևանում հայտարարել թուրքական պրոտեկտորատ[19]։

1921 թ. փետրվարին Շուշվա գավառային կոմիտեն Գ. Կ. Օրջոնիկիձեին և Նարիմանովին հայտնում է, որ Զանգեզուրից կարմիր բանակի հեռանալուց հետո Լեռնային Ղարաբաղի քաղաքական դրությունը նկատելիորեն վատացել է։ Տեղական դաշնակցական ուժերը ամուր կապ են հաստատել Նժդեհի հետ, բացահայտորեն դուրս են գալիս սովետական օրգանների դեմ և նպատակ ունեն Լեռնային Ղարաբաղում տապալելու սովետական իշխանությունը[20]։

Մինքենդի երեք շրջաններում կատարյալ անիշխանություն է տիրում։ Ֆեոդալ Սուլթան բեկը համագործակցելով Նժդեհի հետ, դաժան դատաստան է տեսնում տեղական կոմունիստների և գյուղացիների հետ, կողոպտում նրանց ունեցվածքը, դիմադրողներին սպանում,— այսպիսի բովանդակությամբ Ռ. Կ. Օրջոնիկիձեին, Հայաստանի, Ադրբեջանի սովետական օրգաններին և 11-րդ կարմիր բանակի հրամանատարությանը ընդարձակ զեկուցագիր են ներկայացնում Մինքենդի կուսակցական և սովետական կազմակերպությունները[21]։

Այսպիսով, Զանգեզուրը դարձել էր ներքին ու արտաքին բոլոր հակահեղափոխական ուժերի՝ ամեն երանգի թափթփուկների գործողությունների հավաքատեղի։ Հարկավոր էր բոլոր միջոցներով արագ կերպով վնասազերծ անել այդ վտանգավոր օջախը։

Զանգեզուրի ազատագրման հարցը կրկին դրվեց օրակարգի մեջ։

Գ. Կ. Օրջոնիկիձեն հանդես եկավ որպես այդ գործի ակտիվ կազմակերպիչներից մեկը։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն և Սովետական Հայաստանի կառավարությունը, Գ. Կ. Օրջոնիկիձեի և Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ, Զանգեզուրը խաղաղ ճանապարհով Հայաստանին միացնելու մի շարք փորձեր կատարեցին։ Դեռ 1921 թ. հունվարին Գ. Կ. Օրջոնիկիձեն Բաքվից, Հայաստանի Հեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանի հետ ունեցած հեռախոսային զրույցի ընթացքում, առաջարկեց Զանգեզուրը խաղաղ ճանապարհով Սովետական Հայաստանին միացնելու համար «Լեռնահայաստանի կառավարության» հետ բա-

19 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 106, թ. 4։
20 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 7, թ. 2—3։
21 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 84, թ. 5—6։

նակցություններ վարելու նպատակով ուղարկել պաշտոնական պատգամավորություն։ Սակայն Ավիսը Գ. Կ. Օրջոնիկիձեին բացատրեց, որ Զանգեզուրում ստեղծված իրավիճակի հետևանքով առայժմ անիմաստ է այնտեղ պատգամավորություն ուղարկելը և որ այդպիսի քայլի դիմելը, ըստ էության, վնաս կբերեր սովետական իշխանության հեղինակությանը։ Ավիսը խորհուրդ է տալիս միաժամանակ հեղկոմի անունից այնտեղ պաշտոնական պատգամավորություն չուղարկել և սպասել միայն գարնանը՝ ճանապարհները բացվելուն[22]։

Հայաստանից մանրամասն ինֆորմացիա ստանալով Զանգեզուրում տիրող դրության մասին, Գ. Կ. Օրջոնիկիձեն, հունվարի 22-ին, Վ. Ի. Լենինին հաղորդում է, որ Զանգեզուրում կազմված «ինքնուրույն կառավարությունը» ամուր պաշտպանություն է գտնում անգլիացիների մոտ և որ Հայաստանից ու Ադրբեջանից դեպի գավառ տանող բոլոր լեռնանցքները խոր ձյունով ծածկված լինելու պատճառով հնարավոր չէ այդ ուղղությամբ ռազմական գործողություններ ծավալել[23]։

Սովետական Հայաստանի կառավարությունը հարկադրված սպասեց գարնան գալուն։

1921 թ. մայիսին Գ. Կ. Օրջոնիկիձեի, Ալ. Մյասնիկյանի և Կովկասյան բանակի հրամանատարական կազմի մասնակցությամբ տեղի ունեցավ ՀԿԿ Կենտկոմի նիստը, որտեղ կրկին որոշում ընդունվեց նոր ջանքեր գործադրել Զանգեզուրը խաղաղ ճանապարհով Սովետական Հայաստանին միացնելու համար։ Ուստի որոշվեց Զանգեզուրի «կառավարության» հետ, որ այդ ժամանակ կոչվում էր «Լեռնահայաստանի կառավարություն», բանակցություններ վարելու նպատակով հատուկ պատվիրակություն ուղարկել Սիսիան։

1921 թ. մայիսի 12-ին Սիսիանի շրջանի Կալաջուղ գյուղում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում պարզվեց, որ դաշնակցականները մտադիր չեն Զանգեզուրը խաղաղ ճանապարհով միավորելու Հայաստանի հետ։ Հավատարիմ իրենց ավանտյուրիստական սկզբունքներին նրանք, դեռ բանակցությունները չավարտած, հունիսին Դարալագյազի ուղղությամբ հարձակում ըսկըսեցին կարմիր բանակի զորամասերի վրա։

1921 թ. հունիսի 15-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն հանդես գալով կոմերիտմիության կովկասյան խորհրդակցությունում՝ ասաց. «Զանգեզուրում դեպքերը մեզ հասցրին դաշնակցականների դեմ վճռական պայքարի անհրաժեշտության։ Մենք հարկադրված ենք մեկընդմիշտ լռեցնել ավանտյուրիստներին և համոզված ենք, որ այդ շուտով կկատարվի»[24]։

Հարձակման ժամանակ հրապարակվեց Ալ. Մյասնիկյանի կոչը՝ ռազմաճակատ մեկնող մարտիկներին։ Կոչում ամենայն հստակությամբ շարադրվում էր կարմիր զինվորների, հրամանատարների, կոմիսարների անելիքները Զանգեզուրի լեռներում ապաստանած «մախնոյական, դավաճանական կլիկը արմատախիլ անելու և աշխատավոր, շարքաշ զանգեզուրցուն բախտախնդիր Թափ-Թափուկների ձեռքից ազատելու համար»։

Կարմիր բանակի, Կովկասյան 1-ին կորպուսի հրամանատար Ալ. Տոդորրսկու և կոմիսար Սվիրիդովի զորքերին ուղղված կոչը գրվել էր Օրջոնիկիձեի ան-

22 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 84, թ. 1։
23 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 78, թ. 3։
24 Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. 1, стр. 190.

միջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ։ Այնտեղ ասված է. «Զանգեզուրի և Ղարաբաղի լեռներում իր արձագանքն է գտել համաշխարհային դասակարգային պայքարը... Յուրաքանչյուր հարված գեներալ Նժդեհի կլիկին, այդ հարված է ռուսական մեռնող հակահեղափոխությանը և միջազգային կապիտալին... Զանգեզուրը պետք է դառնա կարմիր, որովհետև այդպես է որոշել Կարմիր Բանակը... Կեցցե սովետական Զանգեզուրը...»[25]։

Դեպի Զանգեզուր շարժվող զորամասերը սերտ կապի մեջ էին Դ. Կ. Օրջոնիկիձեի հետ։ Նրա միջոցով էին լուծվում գործող բանակի հետ կապված ռազմական, քաղաքական և տնտեսական նշանակություն ունեցող բոլոր հրատապ հարցերը։

Հայաստանի հեղկոմի անդամ Բեկզադյանը հունիսի 20-ին Դ. Կ. Օրջոնիկիձեին հայտնում է, որ Զանգեզուր մտած զորամասերի հացը չի բավականացնում և որ սրընթաց ռազմական գործողությունները պահանջում են մատակարարման գործի ուժեղացում։ Դրանից մի քանի օր հետո Դ. Կ. Օրջոնիկիձեն ստանում է Ասքանազ Մռավյանի հեռագիրը, որտեղ վերջինս գրում է, որ զորամասերի հյուսիսային (Ղարաբաղ-Զանգեզուրյան) խումբը ապահովված չէ մսով։ Ղարաբաղում և Զանգեզուրում հնարավորություն կա հայթայթելու պահանջված քանակությամբ միս, իսկ դրա համար հարկավոր է առնվազն 30 միլիոն ռուբլի։ Ասք. Մռավյանը խնդրում է Դ. Կ. Օրջոնիկիձեին անհապաղ միջոցներ ձեռնարկել և այդ մասին տեղյակ պահել նաև Ալ. Մյասնիկյանին։

Կարմիր բանակը հաղթական երթով մտավ Զանգեզուր։ Գավառի աշխատավորությունը նրան կրկին ցնծությամբ ընդունեց, համարյա առանց դիմադրության։ Գյուղացիները ամենուրեք մեծ բազմությամբ ու աղուհացով դիմավորեցին կարմիր եղբայրներին։ Միայն հուլիսի 2-ին Նժդեհ-Թարխանյան զորամասերը Ղափանից հասան Պատպատ լեռնաշղթային և փորձեցին Սիսիանի շրջանը գրաված հայկական կարմիր դիվիզիայի աջ թևից շրջանցել. լուսադեմին հարձակվեցին Ախլության գյուղի վրա, ուր գիշերել էր Լոռվա 4-րդ գնդի առաջին դումարտակը։ Մի քանի ժամ տևող գրոհներից հետո դաշնակցական զորամասը գիշերով նահանջեց Մեղրի։ Սա դաշնակցության վերջին ուժեղ կռիվն էր Զանգեզուրում։

Հուլիսի 2-ին Ղարաբաղ-Զանգեզուրյան ռազմական գլխավոր ուժերը և Երևանյան գնդի զորամասերը Գորիսում միացան իրար ու շարունակեցին առաջընթացը դեպի Ղափան։ 1921 թ. հուլիսի 13-ին գրավելով Մեղրին, Զանգեզուրն ամբողջապես ազատագրեցին։ Նժդեհը և Երևանից փախած դաշնակցության մյուս պարագլուխները փախան Պարսկաստան։

Ալ. Տոդորսկին և Սվիրիդովը Զանգեզուրը ազատագրող զորքերի անունից Դ. Կ. Օրջոնիկիձեին հղած հեռագրում գրում են. «ամբողջ Զանգեզուրի վրա փողփողում է սովետական դրոշը», իսկ Ալ. Մյասնիկյանին զեկուցում Զանգեզուրում բանվորա-գյուղացիական իշխանության տարած հաղթանակի և ամբողջ գավառում հեղափոխական կարգուկանոնի հաստատման մասին։

Ալ. Մյասնիկյանը հեռագրով շնորհավորում է Դ. Կ. Օրջոնիկիձեին՝ կարմիր բանակի տարած փայլուն հաղթանակի առթիվ։ Դ. Կ. Օրջոնիկիձեն իր հերթին ուղիղ գծով կապվում է Ալ. Մյասնիկյանի հետ՝ շնորհավորում Սովետական

[25] ЦПА ИМЛ, ф. 85, оп. 13, д. 75, л. 1—6.

Հայաստանի կառավարությանն ու ժողովրդին՝ Զանգեզուրի ազատագրության կապակցությամբ[26]։

Եվ այդպես, Գ. Կ. Օրջոնիկիձեի գործուն մասնակցությամբ ու ղեկավարությամբ, Զանգեզուրի վրա ծառագում է Հոկտեմբերի պայծառ արևը, նրա խրոխտ ու ազատատենչ ժողովրդին բերելով խաղաղ, ստեղծագործական աշխատանքի հնարավորություն։

* * *

Եզրափակելով մեր ասելիքը, ավելացնենք նաև, որ Գ. Օրջոնիկիձեն Անդրբֆեդերացիայում աշխատած տարիներին իր զեկուցումների, ճառերի, ելույթների ու զրույցների մեջ բազմիցս անդրադառնում է Զանգեզուրում ծավալված իրադարձությունների գնահատությանը։ Անդրադառնալով Անդրկովկասյան ժողովուրդների տնտեսական կապերի զարգացմանն ու ամրապնդմանը, նա մի քանի առիթներով նշում է, որ Զանգեզուրում բոլոր գավառներից առավել սերտորեն էին միահյուսվում հայ և ադրբեջանական ժողովուրդների տնտեսական շահերը։ Իսկ այդ վիճակը մուսավաթականները օսմանական թուրքերի թելադրանքով օգտագործում էին գավառը զավթելու համար, որը երկուստեք տեղի էր տալիս նոր արյունահեղություններին։ Մինչդեռ բոլշևիկներն այդ հանգամանքը նպաստակամղում էին ազգային համերաշխության, երկու ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական կապերի հետագա զարգացմանը։

Ավելորդ չէ նշել, որ այժմ էլ մուսավաթական պարագլուխները, որոնք գործունեության լայն ասպարեզ են գտել Թուրքիայում, փորձում են 1918—1920 թթ. Զանգեզուրի հայ և ադրբեջանական բնակչության միջև իրենց բորբոքած ընդհարումների և արյունահեղության մեղքը բարդել Սովետական Ռուսաստանի և հայ բոլշևիկների վրա։ Այդ տեսակետից հատկանշական է ոմն Մեհմեդ Սագիկ Արանի հոդվածը, որը տպագրվել է ներկայիս Թուրքիայի կառավարող «Արդարություն» կուսակցության փաստացի պաշտոնական օրաթերթ հանդիսացող «Ենի Իստանբուլ» թերթի 1966 թ. սեպտեմբերի 9-ի համարում։ «XX դարում ստեղծված թուրքական երկրորդ պետությունը. Ադրբեջանական հանրապետություն» վերնագրով այդ հոդվածում նա բարբաջում է այսպես. «Նրանք (հայ կոմունիստները — Բ. Խ.) Կարմիր Մոսկվայի դիրեկտիվներով և օժանդակությամբ դիմում էին ամեն տեսակ ինտրիգների և դավադրությունների», որպեսզի ծնկի բերեին կրիտիկական վիճակում գտնվող Ադրբեջանը (մուսավաթական — Բ. Խ.), «կոմունիստական հեղափոխության անվան տակ ոչընչացնեին թուրք բնակչությանը»[27]։

Վերհիշելով Զանգեզուրի և առհասարակ հայ և ադրբեջանական ժողովրդի ապրած ծանր, մղձավանջային օրերը, Գ. Կ. Օրջոնիկիձեն մարգարեաբար գրում էր. «Կանցնեն տարիներ, կմեղմանան կրքերը, և ապագա սերունդներն ատելությամբ կվերհիշեն նրանց, ովքեր մեղավոր էին այդ սարսափների համար»։

Բավական տարիներ են անցել, կրքերը մեղմացել, մեր պատմության հորիզոնից չքացել են ժողովուրդներին ատելի դասակարգերն ու նրանց կուսակցությունները։ Սակայն այդ ծանր, բայց միաժամանակ հերոսական տարիների

26 Նույն տեղում, ց. 14, գ. 85, թ. 3։

27 Մեհմեդ Սագիկ Արանը ադրբեջանցիներին անվանում է թուրքեր։

իրադարձությունների միջից տիրական հպարտությամբ բարձրանում է լենինյան մեծ հեղափոխականի ու ինտերնացիոնալիստի, անդրկովկասյան ժողովուրդների համար այնքան սիրելի ու անմոռաց Սերգո Օրջոնիկիձեի պայծառ կերպարը, իրրև ազգերի համերաշխության ու երջանկության անզուգական օրինակի և խորհրդանիշի։

Б. А. ХУДАВЕРДЯН

ИЗ ИСТОРИИ ОСВОБОЖДЕНИЯ ЗАНГЕЗУРА

Резюме

После победы Октябрьской революции Зангезур, а также Нагорный Карабах и Нахичевань стали спорными территориями и явились ареной межнациональных распрей и кровопролитных войн. В этот период один из видных деятелей ленинской гвардии — Г. К. Орджоникидзе с пристальным вниманием следил за событиями, развернувшимися в Зангезуре и примыкающих к нему районах.

Летом 1918 г. Закавказье было оккупировано войсками германо-турецких захватчиков. Турецкие войска, напав на Армению, были приостановлены в преддверии Зангезура.

В настоящей статье приведены многочисленные факты—письма, телеграммы и другие материалы, свидетельствующие о том, что Г. К. Орджоникидзе давал необходимые указания большевикам, руководил действиями частей Красной Армии и народных ополченцев, борющихся за освобождение Зангезура, Нагорного Карабаха и Нахичевани от дашнакского и мусаватистского господства.

Автор приводит выдержку из письма члена бюро Кавказского краевого и Бакинского комитетов РКП(б) А. И. Микояна, направленного В. И. Ленину, о том, что в Карабахе и Зангезуре большевики опираются на вооруженных армянских крестьян, которые не признают азербайджанское мусаватистское правительство, а мусульманские крестьяне поддерживают коммунистов.

В ноябре 1920 г. в Армении была установлена Советская власть. Однако в феврале 1921 г., подстрекаемые державами Антанты, дашнакские авантюристы подняли восстание против Советской власти и захватили некоторые районы Армении. После разгрома дашнакской авантюры мятежники отступили в Зангезур, который стал их последним убежищем. В связи с этим осложнилось положение в Нахичевани и Карабахе.

В январе 1921 г. чрезвычайный комиссар Нахичеванского края Велибеков в своем донесении Орджоникидзе и Военно-революционному совету 11-й Красной Армии отмечал, что после отступления частей Красной Армии из Зангезура находящиеся в Нахичевани кемалистские войска заняли открыто враждебную позицию в отношении Советской власти в Армении, а также армянских коммунистов и трудящихся Нахичевана,

что турецкое правительство намерено провозгласить Нахичевань турецким протекторатом.

Однако, несмотря на это, трудящиеся Зангезура с помощью частей 11-й Красной Армии в июне-июле 1921 г. свергли ненавистное иго дашнаков, окончательно провозгласили Советскую власть в Зангезуре и прилегающих районах и положили конец межнациональным распрям и кровопролитию в этом районе.

В свете указанных фактов жалкими выглядят попытки некоторых недобитых мусаватистов, нашедших убежище и широкий простор для антисоветской деятельности в Турции, свалить вину за совершившееся между армянами и азербайджанцами кровопролитие из-за Зангезура на большевиков. В статье под заглавием «Второе турецкое государство, созданное в XX в.; Азербайджанская республика», напечатанной 9 сентября 1966 г. в турецкой газете «Ени Истанбул», некий Мехмед Садык Аран, касаясь указанных событий в Зангезуре, Нахичевани и Нагорном Карабахе, игнорируя реальные факты, прямо пишет, что «они (т. е. армяне-коммунисты.— ред.) по директивам и при поддержке Красной Москвы прибегали ко всяким интригам и заговорам», чтобы поставить на колени мусаватистский Азербайджан, который в то время находился в критическом положении, а также «под видом коммунистической революции истреблять турецкое население».

В статье приводятся многочисленные убедительные факты о том, что именно антинародная политика дашнаков и мусаватистов создавала условия межнациональных столкновений из-за Карабаха и Зангезура, а большевики с революционной энергией боролись за разрешение этого вопроса в интересах трудящихся армян и азербайджанцев. Жизнь показала, что только Советская власть, благодаря ленинской национальной политике, была способна решить эту проблему, в результате чего не только был окончательно положен конец кровопролитию в Зангезуре и Карабахе, но и установились братские отношения между азербайджанским и армянским населением этих районов.